ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» հունվարի 2017թ. N 33 - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1110-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի հունվարի 24-ի N 36-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի փետրվարի 19-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2006 թվականի հոկտեմբերի 31-ի N 156-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի, Վաարշապատի, Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 63-2.3-(19-21), 63-3.1-(8-9), 63-3.2-(22-28), 63-4.1-(17-29), 63-4.3-15,63-4.3-(19-23)) անձնագրերի 10-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

<<4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն և ընտանիքների անապահովության գնահատման <<Նպաստ>>, սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողություններ.>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**